



ԲԱՉՄԱՎԼԻ

ԽՄԱԳՐԱԿԱՆ

**ՋՈՒՐ ԶԱՆՔԵՐ**

Եթէ մէկը կարող ըլլար մարդկային գործերու մեծագոյն մասին պատմութիւնը հաւաքել և զետեղել յատուկ տան մը մէջ, ծայրալիր լեցնելով զայն և դուռն ալ կնքելով, տունը ապագային աւանդ յանձնելու համար, ես խորհուրդ պիտի տայի՝ որ այդ կնքուած դրան վրայ՝ մեծամեծ տառերով փորագրել տար յօղուածիս խորագիրը՝ **ՋՈՒՐ ԶԱՆՔԵՐ**։

Եւ յիշատի, ինչ են արդեօք մարդկային ձեռնարկներու շատերուն վախճանն ու արդիւնքը։ . . . Ինչո՞ւ երբ թագաւորներն ու քաղաքական վարչութիւնք խաղաղութիւն կը քարոզեն, ընդհակառակն ժողովուրդները զագաններու

նման՝ մէկզմէկ պատաստելու ոչնչացնելու քստմեծի տեսարանն առջեւնիս կը դնեն . . . Ինչո՞ւ Լահէի խաղաղասիրական ժողովոյն փափաքներն ու վճիռները՝ դառն հեգնութիւն մը կ'արձանանան ժամանակիս օրական պատահմանց հանդէպ . . . Ինչո՞ւ ազգաց վեհապետներն՝ այսքան փոխադարձ ստէպ ստէպ այցելութիւններով խաղարձ ստէպ ստէպ այցելութիւններով կը շարժին, երբ միաբան գործակցելով խնդիր մը պիտի լուծեն . . . Ինչո՞ւ երբ յատուկ տէրութեան մը և կամ մեծագոյն պետութեանց ներկայացուցիչը պաշտօնական յայտարարութիւններ կ'ընեն ժողովրդոց, թէ պիտի բարեկարգեն այս ինչ կամ այն ինչ՝ յուզմանց ենթարկուած կղզիներու կամ գաւառներու բարոյական և նիւթական անտանելի կացութիւնը, նոյն ժողովուրդները կը յամառին՝ զէնքերնին մէկզի չդնելու . . . Ինչո՞ւ նահանգային վարչութեանց ժողովականներ՝ երբ գաւառիկ կամ քաղաքներուն վիճակը լաւցընելու շարք մը կարգադրութիւններ կը հրատարակեն, ընթերցող ժողովուրդը անհաւատ քմծիծաղով և զայրութի ծամուկով մը զլուխնին կ'երեցընեն և կը հեռանան . . . Ինչո՞ւ շատ մը երեսփոխանք քաղաքական և եկեղեցական վարչութեանց՝ երբ փրփրած կը խօսին իրենց դէպ ի ժողովրդեան բարիքը տածած՝ անձանուէր զգացմանց վրայ, զիրենք շրջապատող ժողովրդեանն ստուար բազմութիւն մը ուսերնին թօթուելով՝ մի առ մի կը հեռանան . . .

Այս այսպիսի հարցերու ուրիշ ընդարձակ շարք մը կարող էի մէջ բերել, քաղելով զանոնք մարդկային այլեւայլ դասակարգի ամենօրեայ ձեռնարկներէն. բայց որովհետեւ զանոնք թուելս շատ պիտի երկարէր, և ըրած հարցերուս պատասխանները ընդարձակ հատոր մը պիտի կազմէին, մինչդեռ գրելիքս յօդուած մ'է, ուստի մերձեցնելով խօսքս ուղղակի գրութեանս նպատակին, գոհ կ'ըլլամ նոյն կարգի հարցմանց մէջ ընտրելու և պատասխանելու միայն հետեւեալին. « Ինչո՞ւ երբ ազգային լրագիրներն և ուսումնա-

թերթեր՝ ամէն տարեգլխէ առաջ հրաշալի ծրագրերն և մեծամեծ խոստումներ կը ներկայացնեն ընթերցողաց, ընդհակառակն վերջիններուս թիւն օրէցօր պակսելու մասին ալ անսպառ գանձաներով կը լեցընեն իրենց էջերը, ողորուկո՞ծ դնելով՝ որ ուսումնասիրութիւնն ու ընթերցասիրութիւնը փոխանակ զարգանալու՝ կը նուազի ազգերուս մէջ, այնպէս որ գրեթէ միայն խմբագրական անձինք կը մնան իրենք իրենց յօդուածներուն առաջին և վերջին ընթերցողը » :

Եթէ նախընթաց հարցումներս մէկմէկ վերբեր կ'ակնարկէին՝ որոնք ընդհանուր մարդկութեան կը վերաբերին, այս վերջինս սակայն կը շօշափէ այնպիսի խղիւղութիւն մը՝ որ աւելի մեր ազգին խմբագիրներուն սեփական կրնամ կոչել, ուստի և այդ հարցմունքէն մենք պէտք է աւելի եռանդուն գտնուիլն օգուտ քաղելու, ամէն մէկերնիս քննելով մեր ձեռնարկած հրատարակութեանց սկզբնապատճառ մղիչը, շարունակելու մէջ՝ հաւատարմութիւննիս, և դիտուած վախճանին հասնելու համար՝ մեր միջոցներն ու կարողութիւննիս :

Եւրոպական ռեկյամ բառն՝ ընդարձակ նշանակութիւն և դժբախտաբար ընդարձակագոյն ալ իրագործումն ունի եւրոպացուց մէջ : Մենք Հայերս թէեւ չունինք զէթ մինչեւ այսօր՝ այդ գործողութիւնը նշանակող՝ գոհացուցիչ համազօր բառ մը, սակայն գործնականին մէջ եւրոպացիներէն ոչինչ նուազ կը զեղծանինք անոր յաճախութեամբ և խաբէութեամբ :

Եթէ այդ յաճախութիւնն և խաբերալութիւնը պախարակելի պէտք է համարուի ըստ ինքեան նաեւ վաճառականներու և առեւտրականներու համար, բայց անհամեմատ աւելի տգեղ և զզուելի պէտք է դատուի՝ երբ յանդրգին ոտք կոխելու բարոյական ասպարէզին մէջ, երբ, կ'ըսեմ, դպրոց ու դպրութիւնք ալ ենթարկուին անոր իշխանութեան և հարկին ներքեւ :

Մեր օրագրաց և երբեմն նոյն իսկ ուսումնասիրութից մէջ՝ օգոստոս ամիսը զւրոցական ռեկյամներու շտեմարանն և

դած է, իսկ ղեկեմբերը՝ գրականներուն։ Այդ ամիսներու մէջ դաստիարակելի զաւակ ունեցող ընտանեաց հայր մը և կամ մտաւորական օգտածարաւ ընթերցասէր մը կը նմանի կարծես ուղեւորի մը՝ որ ճամբորդութեան մ'առթիւ կը հասնի եւրոպական մեծամեծ քաղաքներէն մէկուն շոգեկառաց կայարանը, ուսկից ղեպ ի քաղաք մտնելու համար՝ ստիպուած է անցնիլ իւր երկզիէն տողուած երկայն շարքով՝ մեծ ու պզտիկ իջեւաններու, պանդոկներու, ճաշարաններու, սրճանոցներու շատ մը ներկայացուցիչներու միջէն, որոնց ամենուն հրաւէրը և գովարանութիւնները աւանայ մտիկ պիտի ընէ. և եթէ կանխաւ վճռած չէ իւր օթեւանելիք տեղը, կամ պիտի շուարի մնայ այնքան առաջարկուաց բազմութենէն, և կամ ըստ բախտի պիտի ընտրէ այնպիսի պանդոկ մը, ուսկից յետոյ գուցէ շատ տփգոհ պիտի հարկազրի մեկնելու։ Այսպիսի պարագայից մէջ՝ անշուշտ ինքզինքը բախտաւոր պէտք է համարի այն պարոնը՝ որ իւր պատահմամբ ընտրած օթեւանը զինքը լիովին գոհացնելու յարմարութիւններն ունենայ։

Արդ, ընտրողութեան համար այս կերպ դրութիւն մը օգտաւէտ է, նպատաստանոց է արդեօք ընտրել ուզողին։ Եւ նպատաւոր չըլլալուն ապացոյց չէ՞ այն դրութիւնը՝ որ խոհեմագոյն ուղեւորներէ կը գործադրուի. որոնք նախ քան որոշումն տալու թէ որ պանդոկը պիտի իջեւանին, կը գտնեն կանխաւ մէկը՝ որ նոյն տեղը երբեմն իջեւանած ըլլայ, և այն փորձառուէն ստոյգ տեղեկութիւն ստանալով՝ ըստ այնմ կ'որոշեն ընելիքնին. և այսպէս կը մերժեն խարքեայ ուկրամ մը և կ'ընդգրկեն գովելին։

Ուրեմն, ինչպէս օթեւանի մ'ընտրութեան մէջ կայ ըստ բախտի դրութիւնն՝ որ վնասակար ալ կ'ընայ ըլլալ ընտրել ուզողին, և կայ գովելի և փորձառու ընտրութիւնն, որ միշտ օգտաւէտ արդիւնք կ'ընձեռէ, այսպէս ալ դպրոցներու, այսպէս ալ օրագիրներու ընտրութեանց մէջ կը գտնուի։ — Ո՛րչափ ընտանեաց տէր

մարդիկ տեսեր եմ, որոնք այս ինչ դպրոցին շլացուցիչ ակկումներէն հրապուրուած՝ յանձնած են իրենց զաւակները անոր վարչութեան ձեռքը, և սակայն քանի մ'ամիս յետոյ, դառն յուսախաբութիւն մը կրելէ վերջը, ստիպուեիր են հանել անկից իրենց տղաքը, և բարեկամի մը տողուն յաճախած դպրոցն են ուղարկեր, լսելով վերջինէս՝ որ այս երկրորդիս մէջ կ'իւրազործուի ինչ որ առաջինը վստահացնելով կը խոստանար։ — Այսպէս նաեւ որչափ ընթերցասէրներու հանդիպեր եմ, որոնք ձեռուած այս ինչ լրագրին կամ ուսումնաթերթին յանկուցիչ և յափշտակիչ ակկումէն՝ բաժանորդ գրուած են, և սակայն քանի մը թիւերէ վերջը ափսոսանք յայտնած են վճարած տարեկան գներուն, և ստիպուեիր են ուրիշ ընթերցողներէ գովուած թերթի մը նոր բաժանորդագին վճարել։

Վարժարանի մը վարիչ գտնուած ժամանակս՝ կը յիշեմ որ օր մը կոշուեցայ ներկայանալու թոսարանին մէջ Կարոնի մը, (անշուշտ այդ տիտղոսն ալ ակամայ շոպյուած ակկում մ'է այդպիսեաց համար), որ նեղութիւն յանձն առեր էր, (ըստ իւր ըսածին՝ բարեխախտման ըլլալով վարժարանիս պատուոյն և եռանդեամբ լեցուած՝ ազգային մանկանց դիւրութիւններ ընծայելու), և եկած կ'առաջարկէր ինձ՝ որ այդպիսի բարեկարգ և համբաւաւոր վարժարանի մը՝ արժանաւոր գովասանողը պատրաստ էր ըլլալու ինքն՝ այս ինչ լրագրի յօղուածագիրներէն մին ըլլալով, միայն թէ կը փափաքէր՝ մեր համեստութեան զգացմունքը չվիրաւորելու համար՝ կանխաւ մեր ներողամիտ հաւանութիւնը բարեհաճէինք շնորհել՝ իւր ընելիք փոքրիկ ծառայութեան հանդէպ, և այն, և այլն։... Ի՞նչ մը՝ որ կ'ենթադրեմ ամէն մէկ դպրոցի տեսչի ալ գուցէ քանի մ'անգամ հանդիպած ըլլայ, և կ'ենթադրեմ դարձեալ որ ինձ պէս շատեր մերժած ըլլան այդպիսի անակնկալ համակրողներու տալիք կեղծ գովասանքները։

Արդ, ինչո՞ւ երբ դրամ կորզելու հա-

մար այսպիսի սեկյամներու ցրուիչներ կը ներկայանան , մեր անձնասիրութիւնը վիրաւորուած կը զգանք՝ իրենց վատ առաջարկութեան հանդէպ , և խստիւ կը մերժենք հետաքննեք զիրենք մեզմէ . իսկ ընդհակառակն նոյն մտածութիւնը , նոյն առաջարկին իրագործումը , նոյն նպատակաւ կ'իլլենք մենք ինքնին կը կատարենք , սակարկելով լրագրագետի մը հետ՝ որ այսքան ինչ անգամներ՝ մեր վարժարանին , մեր մանկապարտիզին , մեր որբանոցին կամ նմանօրինակ Հաստատութեանց՝ մեծաշառաց ճոռումբան սեկյամները իւր էջերուն վրայ դրողմէ : Չէ որ վերոյիշեալ պտրեւէն աւելի զգուցի և ցածոգի գործ մ'է ըրածնիս . որովհետեւ նա գէթ մի միայն իւր լրագրին ընթերցողները պիտի խաբէր , մինչդեռ մեզմէ շատերը գոհ չեն ըլլար մէկ լրագրով , այլ միեւնոյն սեկյամը քանի մը լրագրիներու մէջ ալ կը հրատարակեն , և անով ալ ջրասկանանալով՝ նաեւ թրուչուն էջերու վրայ աւանդած՝ զանոնք փողոցներու մէջ և կամուրջներու վրայ՝ յարմար անյարմար անցորդներու աջը կը խթեն :

Այդ սեկյամներէն հատ մ'ալ մենք ընդունինք , և պահիկ մը աչք տանք անոր պարունակութեան : Ինչ է այդ զարդարուն դարձուածներու , այդ յորդազեղ բառերու ներքեւ ծածկուած կեցո՞ւպատիւր համաստութեան յայտարարութեան մը ներքին և պարզ իմաստը , եթէ ոչ՝ այս . « Ընթերցողներ , իմ վարչութեանս ներքեւ գտնուող վարժարանի՛ իւր տեսակներուն մէջ ամենէն աւելի կատարելագործուածն է . վասն զի ամենէն աւելի դիւրութիւններ և օգուտներ կ'ընծայէ իրեն դիմողներուն . զրամի վճարման դիւրութիւններ՝ այժմ ինծմէն գիտութիւնը գնելու համար , և գիտական օգուտներ՝ ապագային անոնցմով ուրիշներէն զրամ գնելու համար . . . իմ տուած օգուտներս ընաւ ուրիշի մը ըրով չէք գտներ . ոչ մէկ Հաստատութիւն իմիսիս հետ մըրցակցելու կը յանդգնի . ուրիշներու շահակրատութիւններէ մի՛ խարուիք , ապա թէ ոչ՝ շատ կը զղջար » :

Ո՛րքան զգուցի բան է՝ տեսնել բարոյական և մտաւորական կրթութիւն աւանդող սրբարանի մը այսքան ստոր և ոսմկական ոգին , ի հարկէ՛ բարեբրիկ ձեւերու ներքեւ սքողուած : Ասկէց ինչ տարբերութիւն ունի այն՝ որ կ'ընեն շուկաներու մէջ կրպակաւորները , մագործները , նպարտվածաւաններն ու պողածախները , և կամ փողոցներու մէջ շրջագայիկ փերեզակներն ու քանջարավաճառները :

Ինչ որ կրթական Հաստատութեանց վրայ խորհրդածեցի , նոյնը կը վերաբերի ըստ ամենայնի նաեւ լրագրաց և ուսումնաթերթից ըրածին . վասն զի միթէ այս վերջիներես ալ հասարակութեան մտքին ու սրտին կրթարանները չ'են կամ պարտք չունին ըլլալու : Արդեօք նուա՞ց նոցականք կ'ազգեն այդ հրատարակութեանց պոռտախօս սեկյամներն ալ դեկլմներ — յանուարի մէջ , քան ինչ որ կը ներգործեն օգոտոտոս—սպտեմբերի մէջ գործարուածները : Արդեօք նուա՞ց ստորնացուցիչ է այդ շուկայական դրութիւնն լրագրաց և ուսումնաթերթից համար , որքան վերոյիշուած խեղկատակ կերպերը կրթական Հաստատութեանց համար — Եւ ինչո՞ւ միտքան չհարուածենք չճաղկենք այսպիսի անարգ դրութիւն մը , և մեր միջէն չանհետացրնենք քաղաքակիրթ համարուած Եւրոպայի այդ մէկ վիժածը , որ արդէն անոնց ընտրելագոյն կրթական Հաստատութիւններէն և ականաւոր մտաւորական հրատարակութիւններէն շատոնց մերժուած հալածուած՝ եկեր կարծես մեր ըրփն և ապաստաներ : Այսպիսի կարծես թէ՛ կը տեսնեմ՝ որ պաշտօնակից դպրոցի—վարիչներէս և կամ զբական թերթից խմբագրակիցներէս ոմանց ոմանց ճակատներն կը կնճըմտի , երեսներն կը խոժոռի այս տողերս կարդացած ժամանակներն . կարծես ականջիս կը հասնի իրենց վիրաւորուած անձնասիրութեան քրթնջիւնը , թէ « Թող նախ Միսիթաբիանց վարժարանները և անոնց բազմովիւր իրենց մեծաշուքի սեկյամները դադրեցնեն , և յետոյ ուրիշներէն պահանջեն իրենց հետեւելու » :

Այսպիսեաց տալիք անկեղծ պատասխան այս է. « Աշուտ պարսաւաղէտ մը չեմ: Յոռուծիւն մը՝ երբեք ձերք չի կրնար համարուիլ՝ իր ենթակային պատճառաւ: Ինչպէս հիւանդութիւն մը՝ թագաւորաց վարայ առողջութիւն չ'ըսուիր, բիժ մը՝ մետաքսի վրայ զարդ չի կոչուիր, այլ ենթակային ազնուութեան և բարձրութեան համեմատ՝ այնքան ալ տգեղութիւն կը պատճառէ, և այնքան ալ անհետացնելու շուտափոյթ ջանք կը պահանջէ, այսպէս ալ ռեկլամներու զեղծմունքը ո՛ր և իցէ բարձրագոյն դասակարգի ընկերութեան մը համար ալ պարծանքի նիւթ չի կրնար համարուիլ. և յօղաածիս գրողը ինչ որ կը փափաքի ազգային ուրիշ կրթարանաց և ուսումնական հրատարակութեանց համար, նոյնը ի հարկէ առաւելագոյն կերպով կը բազմայ միշտ իրագործուած տեսնել Միւթարեանց վարժարաններէն և Բազմալիպիս խմբագրութենէն. ապա թէ ոչ՝ համոզուած եմ՝ որ այս տողերս ալ պէտք է նետուին վերոյիշեալ ԶՈՒՐ - ԶԱՆՔ խորագիրը կրող տան մէջ:

Բայց « Տարօրինակ պահանջ, գուցէ ըսէ մէկը. ինչ, ուրեմն ասկէց վերջը ալ ծանուցանելու չննք քաղաքացեաց դպրոցի մը կամ լրագրի մը և կամ ուսումնաթերթի մը հիմնարկութիւնը, և կամ եղածներուն բարեփոխութիւններ կրած ըլլալին »:

Նախ և առաջ թող ներելի ըլլայ ինձ ըսել՝ որ երանի՜ թէ կարգ մը կրթական կոչուած Հաստատութեանց և կարգ մ'ալ գրական հրատարակութեանց՝ ազգայինք ամէնքն ալ բոլորովին անգէտ մնային... Գէթ այս տգիտութեամբ պիտի օգուտէին տղաք՝ ժամանակնին անօգուտ տեղ չվատնելու, շատ անգամ իրենց մանկական անմեղութիւնը կորուսանելու տուգանքով, և չափահասները՝ դրամսին փաստակար կերպով չծախսելու, գնելով և կարգալով այնպիսի թերթեր՝ որոնք լրագրի վիժածներ են, անբարոյական տմաններու շտեմարաններ են, և կամ քրիստոնէական սուրբ կրօնից սկզբունքներու դէմ հայհո-

յանքներու զարշութիւնք են, անհաւատ գրիչներու խողովակաց հոսմունքներէն կուտուած և խտացած, որոնք կը թունաւորեն կ'ապականեն ընթերցողներու մտաւորական մթնոլորտը, և որոնք պէտք էին ոչ միայն ուղղադատ մտքերէ, այլ և ժողովրդեան բարոյականին վրայ հսկող վարչութիւններէ ալ մէջտեղէն անհետացուի:

Բայց մէկդի առնելով հանդերձ այսպիսի բացատրութիւններ, (որոնք իրբեւ փակագծի մը մէջ յիշատակել ուզեցի), կը հարցնեմ դարձեալ. « կ'արժէ՞ արդեօք որ ազգայինք տեղեակ ըլլան կարգ մ'ալ օրագիրներու և ուսումնաթերթ կոչուածներու, որոնք իրենց խմբագիրներուն հետ կամ դրամաշահութեան հրապարակ մը մտնել կարծելով և կամ անձնասիրական կիրքերու և ցուցամոլութեան մղմամբ, վայրի սնկերու նման ընթերցող հասարակութեան չորս դին կ'ընծիղին և կը թառամին չորնան, քանի մ'ամսուան կամ քանի մը տարուան անհամ-անժուր-անգոյն յօղուածներէ սնած հիւանդագին կեանքէ մը վերջը: Եւ սակայն ամէն այդպիսի հրատարակութիւնք, որոնք նախ ռեկլամներու շահնդներով կը թնդացնեն ընթերցասէրներու լսելիքը, կը յայտարարեն միշտ ի սկզբան՝ թէ ասպարէզ եկած են ուսումնորութեան ջահը ձեռքերնին՝ ազգին մտաւորական խաւարը փարստելու, և կամ թէ անդրնդատոյզ գրականութիւնք խելու իր կործանման գահավիժին վերայէն և Պառնասոսի բարձունքը վերափոխելու... »

Ի՞նչո՞ք ազգ, ի՞նչո՞ք գրականութիւն... Զըլլայ թէ արդեօք այդ մեր ազգին ու գրականութեան աչքերը՝ այդքան հրատարակութիւններէ ճառագայթած չափազանց լուսոյ կիզիչ պայծառութենէն է՞ որ կը բլշակնին, այդքան փնասիչ լուսոյ յորդութենէն է՞ որ կը կուրանան... »

Վերոյիշեալ բռնագրօսիկ առարկութեան պատասխանն այստի է: Եւ ոչ թէ զբարոյցի մը և կամ լրագրի մը հիմնարկութիւնը յայտարարող և կամ անոնց ծրագիրներուն բարեփոխութիւններն ազգող

ծանուցումներու դէմ կը մաքառիմ, այլ ծանուցմանց ուռուցիկ և կրպակային ձևակերպութեան դէմ: Որ և իցէ բան մը և կամ անոր փոփոխութիւնը համեստօրէն յայտարարող ազդ մը՝ հարկ եղած ժամանակ տպագրութեան ձեռքով հասարակութեան ծանուցանելն՝ ըստ ինքեան օգտակար բան մ'է. բայց ֆինասակար կ'ըլլայ այն պարագային՝ երբ համեստութեան սահմանէն դուրս կ'ելլէ, երբ հրատարակողն անգամ գիտակից է՝ որ այդ ազդը չափազանցութիւն մ'է և իրականութեան չի համապատասխաներ, այլ աշակերտի թողակ մը կամ ընթերցողի բաժանորդագին մը աւելի կորզելու համար է ըրածը, և որուն արդարացումը իր մտքին մէջ (և երբեմն նաև լեզուին վրայ) այս է. « Ինչ ընեմ, հիմակուան սովորութիւնն է. այսպէս չընեմ » չ'ըլլար. նորիցով մ'է՝ որուն ամէնը կը հետեւին. միթէ այս ինչ վարչչը և կամ այն ինչ խմբագիրն ալ այսպէս չ'են ընեն » . . . Ճիշդ, ինչպէս կեղծ ակունքներ ճշմարտի տեղ ծախող գոհարավանաք սպիտի բւեր իւր խարբրայութեան գիտակիցներուն:

Ուրեմն ինչո՞ւ կը դառնաք զանգրտիք, ո՞վ գիտութեան կեղծ գոհարները ճշմարտի տեղ վաճառող դաստիարակներ և խմբագիրներ, թէ՛ ձեր խնամոց յանձնուած դրպրոցին՝ ազգը համարակներ չի հասցըներ, և կամ ձեր հրատարակած թերթերուն՝ ընթերցողներ չի մատակարարեր: . . . Ինչո՞ւ կ'ամբաստանէք կը մեղադրէք այն ուղղամիտ և գգուշահայեաց գիտութիւն գնել ուզողները, որոնք յետ միանգամ խարուելու ձեռքէ, երկրորդ անգամ մ'այ ձեր այդ զուելի խանութիւններուն դռներէն չանցնելու համար՝ տարբեր փողոցէ մը կը քայլեն, որպէս զի չըլլայ թէ յանկարծ ձեզի հանդիպին, և օձիքնին ձեր ձեռքէն ազատելու համար՝ պատռելու վտանգի մէջ դնեն: — Միթէ այդ երեսդարձութիւնը ձեր դպրոցէն, ձեր լրագրէն կամ ուսումնաթերթէն՝ միակ և արժանաւոր պատիժը չ'է՞ ձեր գործած կեղծ գիտական-վաճառականութեան, համակշիռ այն պատժոյն՝

որուն կ'ենթարկուին պետութեան օրէնքներէ՛ սուտ գոհարները ճշմարտի տեղ ծախող խարբրայ ակնավաճառք: — Կ'ուզէ՞ք պաշխիսիներ չհամարուիլ. կը փափաքի՞ք հասարակութեան յարգանաց և յաճախորդութեան . . . օ՛ն, ուրիշ միջոց չկայ, կամ հեռացէ՞ք այդ խեղկատակ առուտորէն՝ եթէ մտաւոր իսկական գոհարներ չունիք բաշխելու ժողովրդեան, և կամ փոխեցէ՞ք ձեր վարժարանաց և ձեր գիտական հրատարակութեանց կեղծ ապրանքները իրականներու հետ, ձեր առաջարկած շինծու ծրագրները՝ իրենց իսկական և խղճովին գործադրութեան հետ: . . . Եւ ահա այն ատեն պիտի տեսնէ՞ք որ ա՛լ զանգատներ ընելու պէտք պիտի չունենանք, և զուր տեղ՝ զուր ջանքեր պիտի չբանեցնէ՞ք ձեր թերթերու սինակներուն մէջ՝ ձեր ազգակիցները գիտութեանց և ընթերցման անսիրողներ կոչելու:

Սակայն այդ նպատակին հասնելու համար՝ ինչպէս կանխեցի գուրցեցի՞ պէտք է անաչառ և ուղղամիտ քննադատութեան ենթարկէ՞ք ձեր բացած վարժարանին և կամ ձեր հիմնած գիտական հրատարակութեան ներքին արժէքը, կարեւորութիւնը. պէտք է քննէք թէ ինչ եղած է այդ ձեր ձեռնարկութեան սկզբնաշարժ մղումն սուող գաղափարականը, ազնիւ է այն և անապակ, թէ՛ զուցէ անազնիւ և պղտոր կիրքերէ շրջապատուած. եթէ՛ ազնիւ է՝ ունի՞ք միջոցներ և կարողութիւն՝ այդ գաղափարական իրագործելու կամ գէթ անոր հասնելու համար սրբազան կոխ մը մղելու: Պէտք է նաև ձեր ընթացքին մէջ քննէ՞ք միշտ թէ՛ մնացել է՞ք հաւատարիմ ձեր ի սկզբան բացած պատուաւոր դրօշին ներքին, թէ՛ զուցէ հասարակութեան բարիքը ձեր ընթերցողաց միանգամ ցոյց տայլ վերջը՝ հրաժեշտի ողջոյննիդ տուած է՞ք անոր, և կը զբաղիք ձեր սեփական կիրքերը գոհացնելու, ձեր կուսակցական պայքարները մղելու, ձեր շահագիտական վախճանին ծառայեցնելու մամլոյ սրբագնութիւնը:

Այսպիսի անաչառ և խիստ և անհրաւ

ժեշտ քննութեան մը հետեւանքն այն պիտի ըլլայ՝ որ կ'ամ ճանչնաք ձեր անձեռնհասութիւնը այդ ասպարիզին մէջ և անկէջ քաշուիք հեռանաք, և զնաք ձեր կարողութեան համապատասխան զիրք մը բռնելու ընկերութեան մէջ, և կ'ամ շտկէք ձեր թիւր ըմբռնումը՝ որ ձեր բարձր պաշտօնի կոչման անհամաձայն է, և ուղիղ հիման, հաւատարիմ և անկեղծ գործունէութեան և գիտակից ձեռնհասութեան մը

վրայ ահրացնէք ձեր ջանքերը, որոնք այն ատեն միայն՝ պիտի դադրին ըլլալէ . . . ԶՈՒՐ ԶԱՆՔԵՐ, որովհետեւ պիտի ըլլան անկեղծութեան մ'արգասիքներ. և հետեւաբար ինձ ալ և ինձ նման փափաքողներու ալ՝ առիթ պիտի տան միտնաբուծեամբ զիտելու և հռչակելու ձեր ՕԳՏԱԻՏ ԶԱՆՔԵՐՈՒՆ արդիւնքները:

Հ. Ա. ՏԵՐՈՅԵԱՆ

# ՀԱՆԴԷՍ ԱԶԳԱՅԻՆ



## ԵՂԻՇԷԻ ՊԱՏԱՌԻԹԵԱՆ

### ՆՈՐԱԳԻՒՏ ՀԱՏԱԿՈՏՈՐՆԵՐ

Քանի մը ամիս առաջ յԱսորիս և ի Կիլիկիս ճանապարհորդութիւն մ'ընելով, առիթ ունեցայ նորանոր ձեռագիրներ տեսնելու. զորս եթէ անկարելի եղաւ ինձ ստանալ ո՛ր և է միջոցաւ, սակայն ազնիւ ստացողաց թույլտուութեամբ՝ կրցայ անոնց յիշատակարանները օրինակել. որոնք քիչ ատենէն ամբողջական հաւաքածոյի մը մէջ լոյս պիտի տեսնեն:

Հալէպի Հայոց առաջնորդ Կարապետ Ծ. Վ. Տէր Կարապետեան սրբազանն, ինձ ցոյց տուաւ զէջ մը ձեռագիրներ, զորս իւր գիտական խնամքովը իրենց վարաւոր բանաւն — մութ ձեղունէ մը — նորապէս ազատելով, մաքրել և կարգի գնել կու տար: Կը յուսանք որ այսպիսի լուսամիտ անձի մը ձեռքով գեռ շատ գանձեր կորստենէ կ'ազատին: Ձեռագրաց թիւր, անունը, բովանդակութիւնը և մանաւանդ յիշատակարանները խոստացաւ բարձրապատիւ սրբազանն յղել ի Ս. Ղազար, որուն կատարման սպասելով՝ կանխիկ շնորհակալութիւննիս կը յայտնենք: Զէյթնոյ մէջ, բաց ի Ս. Աստուածածնայ վանքի մէջ գանուող քանի մը թղթեայ և յետին դարու ձեռագիրներէն, կայ ուրիշ թանկագին Աւետարան մը, մագաղաթեայ, երկաթեայ, զարգարուած գեղեցիկ նկարներով և պէտպէս վարպետով. ոսկեզօծ պատկերի, ոսկեզօծ ծաղկի և տառի շաղկապի մը ամէն էջի վրայ. ընդարձակ յիշատակարան մը ետեւը, որուն վերջի մասերուն մէջ տեղւոյն անցքերէն՝ յիշատակութիւնք կան: Սա Կոստանդին կաթողիկոսի Աւետարանն է, . . . գրուած, որուն վրայ բարեպաշտ Զէյթնոցին աւելի կը գուրգուրայ և խնամք կը տանի՝ քան հնա-